

նութիւն մը, որ պիտի կրնայ չհղորացնել բացասական ուժերը, առանց նոյնիսկ պատերազմի, արևնահեղութեան, սոսկ մտրակի թափահարումով կամ տնտեսական ճնշումներով:

\* \* \*

Սօսեցինք Ուքրայնայի անջատման պարագայի մասին: Բարեբախտաբար, անջատումի կողմնակիցները թոյլ փոքրամասնութիւն մըն են այդ երկրի մէջ: Անջատական ձգտումները ուժեղացան բոլշեւիզմի բարբարոս տիրապետութենէն ի վեր, որ ստէպ իր վայրագութեամբ կը դերազանցէ հին ցարական ուժ-ժիւղը: Բոլշեւիզմէն առաջ չկար կամ սաղմի մէջ էր ազգայնական հոսանքը Ուքրայնայի մէջ: Հոն կը տիրէր ռուսերէնը, երկրի լաւագոյն գրողները — Գօգօլ, Կօբոլենկօ, Պօստպենկօ եւայլն — կը գրէին ռուս մշակուած գրական լեզուով եւ երբեք Ուքրայնայի կոչոյ, անմշակ բարբառով: Երկիրն ալ ճանչցուած էր «Փոքր Ռուսիա» անունով (Մալօրօսիա) — նոյն ռուս ազգի մեծագոյն ճիւղերէն մէկը եւ խիստ վիճելի են այն բոլոր փաստերը — պատմական, մարդարանական, լեզուադիտական եւայլն — որոնցմով ուքրայնացի անջատականները կը ձգտին այսօր ապացուցանել աշխարհին թէ՛ իրենք միանգամայն տարբեր ազգ մըն են, բուն ռուսներէն ալ աւելի բարձր, աւելի ընդունակ ու յառաջադէմ եւ որ իրենց կը պատկանի հողերու հսկայական տարածութիւնը Պօլտավայէն մինչեւ կովկասեան սահմանները:

Վիճելի են ուքրայնացի մոլեռանդ հայրենասէրներու յաւակնութիւնները եւ նոյն ինքը Ընկերավարական Ինտերնացիոնալը կը մերժէ ճանչնալ Ուքրայնան իրրեւ Ռուսիայէն տարբեր ազգ մը, իր ուրոյն դատով ու պահանջներով: Մէկ երկու անգամ ուքրայնացիք փորձեցին ընդունել տալ իրենց դատը հայկականի ու վրացականի շարքին, բայց Միջազգային Ընկերավարական Համադումարը՝ ՄակիՊոնալդի, Հետտերսընի մասնակցութեամբ միանգամայն ժխտական դիրք բռնեց:

Հակառակ այդ աննպաստ տրամադրութիւններուն, Ուքրայնայի անջատականները կը շարունակեն իրենց ազիտացիան եւ յոյս

ունին օր մը նուաճել հայրենիքի բացարձակ անկախութիւնը:

ՄակիՊոնալդ եւ իր ընկերները, ինչպէս ըսինք, չեն ձգտիր, բրիտանական նախորդ կառավարութիւններուն պէս, անդամատել ու տկարացնել Ռուսաստանը, զոր չեն համարեր վտանգ մը Հնդկաստանի համար:

ՄակիՊոնալդ, ինչպէս եւ բոլոր արեւմուտեան ընկերավարական եւ դեմոկրատ տարբեր կ'ուզէին — համաձայն դեմոկրատիզմի համաշխարհային հաւատամքին — որ ռուս կայսրութեան այդ բոլոր ազգերը, մեծ ու փոքր, Լեհաստանի սահմաններէն մինչեւ Սիբիր ու թուրքեստան, միանային հսկայ Ռաշնակցական Կազմակերպութեան մը մէջ (Federation) նման, օրինակ, բրիտանական կայսրութեան, որու մէջ առաջին կարգին պիտի մտնէին Վելիկօրօսիայի հետ (Մեծ Ռուսիա) — Ուքրայնա եւ Կովկաս, վերջինը իր հերթին կազմուած չորս անկախ եւ դաշնակից պետութիւններէ — Հայաստան, Վրաստան, Ադրբայճան, եւ Կովկասեան Լեռնաստան:

Ֆէդերատիւ մը, որ, ի հարկէ, ոչ մի առնչութիւն պիտի չունենայ այժմեան բոլշեւիկեան իրաւակարգին հետ, որ ծաղրանկարն է ճշմարիտ ռամկավար կազմակերպութեան, ուր ազգերու անկախութեան ստուերը միայն կայ, ուր սոնահարուած են եւ վայրագօրէն խեղդուած բոլոր մարդկային ազատութիւններն ու իրաւունքները:

Այդ ազատ եւ դեմոկրատ Համադաշնակցութեան սկզբունքը կը դաւանին նաեւ ռուսական ազգեցիկ կուսակցութիւնները, որոնք ալ համոզուած են — անցեալի դառն փորձերէն — որ կենդրոնական սխալմով անհնարին է կառավարել պատմութեամբ ու մշակոյթով այնքան տարբեր՝ քանի մը տասնեակ ցեղերը:

Անշուշտ, ազգայնական զգացումն ու հաւատամքը կը շեշտուին հետզհետէ երկրագնդի բոլոր, անգամ ամենէն յետամնաց ցեղային համախմբումներու մէջ (ապացոյց՝ թերեւս միայն քիւրտը, արաբը, առնաուտը, թուրքը, թաթարը) եւ համաշխարհային պատմութեան բեմին վրայ մին միւսի ետեւէ հանդէս կուզան նոր-նոր ազգային պետութիւններ, բայց միւս կողմէն — եւ այսպէս կը խորհի դեմոկրատ